

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. հոկտեմբերի 27-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 35-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը, հաշվի առնելով, որ օրակարգում ընդգրկված է ղեկանի տարեկան հաշվետվության հարցը, իսկ համաձայն՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կանոնադրության 26-րդ կետի համաձայն՝ ղեկանը չի կարող լինել ղեկանի հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերի նախագահողը, և որ այդ նիստերը վարում է գիտական խորհրդի կողմից ընտրված նախագահողը՝ ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանն առաջարկեց առաջադրել նախագահողի թեկնածուներ: Խորհրդի անդամների կողմից առաջադրվեց պրոֆ. Ա.Վաղարշյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև ախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. **Իրավագիտության ֆակուլտետի ղեկանի տարեկան հաշվետվություն:**
2. **Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Ռ.Շոյանին պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:**
3. **Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ա.Վարդապետյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:**

1. **ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի ղեկանի տարեկան հաշվետվությունը (զեկ.՝ խորհրդի նախագահ, ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյան):**

Ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը սկսեց ներկայացնել 2015-2016 ուսումնական տարվա հաշվետվությունը՝ ընդգծելով, որ այն առավելապես ծրագրային բնույթ է կրում, քանի որ կատարված աշխատանքների հետ ներկայացվելու են, ըստ բնագավառների, անելիքները՝ հիմքում ունենալով ԵՊՀ 2016-2020թթ. ռազմավարական զարգացման ծրագիրը և ֆակուլտետի 2014-2019թթ. զարգացման ծրագիրը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ֆակուլտետը գտնվում է զարգացման կարևորագույն փուլում, և անհրաժեշտ են ոչ ստանդարտ քայլեր կրթության ոլորտում ընդհանրապես և մասնագիտական կրթության բնագավառում աշխարհում ընթացող զարգացումների համընթաց քայլերու համար:

Անդրադառնալով ուսումնական գործընթացին՝ ղեկանը նշեց, որ առաջնային խնդիրը, որի հետ ֆակուլտետն առնչվում է, ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի, դասավանդման մեթոդիկայի, գիտելիքների ստուգման համակարգի կատարելագործման

անհրաժեշտությունն է, ինչը բազմիցս մատնանշվել է թե ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից և թե բարձրաձայնվել ուսանողների հետ հանդիպումների ընթացքում: Պրոֆ. Գ.Ղազինյանը նշեց, որ այս ուղղությամբ որոշակի սկզբունքային փոփոխություններ են կատարվել բակալավրիատում և մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպելու տեսանկյունից, մասնավորապես, անցած ուսումնական տարում պիլոտային կարգով բակալավրիատի 3-րդ կուրսի որոշ հիմնական դասընթացների գծով փորձարկվել է ազատ հաճախումների գաղափարը, որը ուսանողին հնարավորություն է տվել սեփական հայեցողությամբ տնօրինել իր աշխատաժամանակը դասախոսություններ լսելու կամ ինքնուրույն կերպով հետազոտություններ անելու առումով: Ներկայության համար տրվող 2 միավորը ստացել է իր իրական իմաստը՝ վերափոխվելով մասնակցության համար 2 միավորի, որի հաշվարկման հիմք է դարձել գործնական պարապմունքներին ուսանողի ակտիվություն դրսևորելու պայմաններում միավորների կուտակումը: Նման մոտեցումը դեկանի խոսքերով հնարավորություն է տվել լուծել մի քանի խնդիրներ՝

- մոտիվացնել ուսանողներին, խթանել նրանց սովորելու ձգտումը, մասնակցությունը գործնական պարապմունքներին,
- իմաստային նշանակություն տալ մասնակցության համար տրվող միավորներին,
- խթանել դասավանդման որակի բարձրացմանը, քանի որ դասախոսություններին ուսանողների մասնակցության աստիճանը ուղիղ համեմատական է դասախոսությունների որակին:

Անդրադառնալով մագիստրատուրայում կրթական գործընթացի կազմակերպմանը՝ դեկանը նշեց, որ գաղտնիք չէ (և այդ մասին նշվել է նաև նախորդ տարվա հաշվետվության ընթացքում), որ այն ոչ միշտ է գրավիչ բակալավրիատի շրջանավարտների համար՝ պայմանավորված դրա տևողությամբ, մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների շրջանակում ստացած գիտելիքների կարևորության և պիտանելիության հանդեպ ուսանողների մոտ առկա թերահավատությամբ, մագիստրոսի աստիճանի անորոշությամբ կամ ոչ հստակությամբ: Բացի այդ, իբրև կարևոր հանգամանք մատնանշվեց նաև այն, որ մեր օրենսդրությամբ, ի տարբերություն մի շարք արտասահմանյան երկրների, օրինակ հենց մեր հարևան Վրաստանի, տարանջատված չեն այն ոլորտները և իրավաբանի այն կարգավիճակները, որտեղ անհրաժեշտ պայման է մագիստրոսի կրթական աստիճանի առկայությունը: Պրոֆ. Գ.Ղազինյանի կարծիքով խնդրի լուծումը, առաջին հերթին, կապված է այս կրթական ծրագրի առաքելության ու խնդիրների օրենսդրական մակարդակով հստակեցման հետ՝ բակալավրիատի համեմատ կրթական արդյունքի որոշակիացման ուղղությամբ՝ համոզվածություն հայտնելով, որ այս հարցում կարևոր նշանակություն կունենա նաև բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների աշխատանքային գործունեության հարցում հստակ օրենսդրական կանոնակարգումը, ինչը պետք է որ իրականացվի ՀՀ-ում Իրավաբանական կրթության և իրավական դաստիարակության մասին հայեցակարգի և դրա հիման վրա ընդունվելիք իրավական ակտերի միջոցով: Դեկանը հիշեցրեց, որ Կառավարության որոշմամբ հաստատվել է նաև այս հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը, որում իր գործուն մասնակցությունն է ունեցել իրավագիտության ֆակուլտետը:

Դեկանի խոսքերով, նկատի ունենալով այն գործոնները, որոնք խոչընդոտում են մագիստրատուրայում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵՊՀ ղեկավարության հետ հաջորդ ուսումնական

տարվանից մագիստրատուրայում կրթությունը կազմակերպել 3 կիսամյակով՝ ներկայիս 4 կիսամյակի փոխարեն այն առումով, որ ուսանողները 2 կիսամյակի ընթացքում կուսումնասիրեն մասնագիտական նյութը, իսկ 3-րդ կիսամյակի ընթացքում կկազմակերպվի նրանց պրակտիկան:

Անդրադառնալով դասավանդման մեթոդիկայի կատարելագործման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին՝ դեկանը հատուկ նշեց, որ ֆակուլտետը լուրջ ծրագրեր է իրականացնում մի շարք միջազգային կառույցների հետ՝ GIZ, IRZ, ABA, օրինակ GIZ կազմակերպության հետ իրականացվող ծրագրի շրջանակներում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պատվիրակության կողմից ճանաչողական այցեր են կատարվել Մանհայմի և Հայդելբերգի համալսարաններ, Համբուրգի Իրավաբանական դիդակտիկայի ինստիտուտ, որի շրջանակներում ոչ միայն ծավալուն քննարկումներ են տեղի ունեցել իրավական կրթության ամենառանցքային հարցի՝ դասավանդման մեթոդիկայի շուրջ, այլև արդյունքում հիմք է դրվել նոր տարածաշրջանային ծրագրի՝ Իրավագիտության ոլորտի ուսումնական ծրագրերը, նյութերը վերամշակելու, դասավանդման մեթոդները կատարելագործելու նպատակով: Ներկայումս Իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի և ֆակուլտետ գերմանացի գործընկերների համատեղ ջանքերով «Քաղաքացիական իրավունք» դասընթացի շրջանակներում պատրաստվել են նման նյութեր, և պայմանավորվածություն կա այդ փորձը տարածել նաև Սահմանադրաիրավական և քրեաիրավական ուղղվածության դասընթացների վրա: Իսկ դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ անցկացվել են և առաջիկայում նախատեսվում են կարճաժամկետ վերապատրաստման ծրագրեր:

Ուսումնական գործընթացում չափազանց կարևորելով նաև գիտելիքների ստուգման մեխանիզմի վերանայումը՝ դեկանը նշեց, որ այդ նպատակով, ծրագրվում է 2016-2017 ուսումնական տարվա բակալավրիատի ավարտական քննությունները «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», «Քաղաքացիական իրավունք» և «Քաղաքացիական դատավարություն» առարկաներից կազմակերպել գրավոր եղանակով՝ ուսանողներին հանձնարարելով լուծել խնդիր-իրավիճակներ:

Իբրև առանձին խնդիր՝ դեկանը նշեց դասագրքային ֆոնդի թարմացումը և տեխնիկական հագեցվածությունը, ընդ որում, արդեն թարմացված բովանդակային պահանջներով՝ շեշտադրում կատարելով դատական պրակտիկայի նյութերի ներառմանը, խնդրագրքերի, ուսումնական նյութերի թարմացմանը: Ինչ վերաբերում է տեխնիկական հագեցվածությանը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից իրավաբանական դպրոցը, դեկանը խոսեց առավելապես համակարգչային կենտրոնի բարոյապես հնացած, դեռևս 2002 թվականին ձեռքբերված 20 համակարգիչների մասին, որոնց թարմացումը կենսական անհրաժեշտություն է և այս առումով անհրաժեշտ է ԵՊՀ-ի աջակցությունը:

Իբրև ուսումնառության գործընթացի առավել խոցելի կետ՝ պրոֆ. Գ.Ղազինյանն առանձնացրեց պրակտիկայի անցկացումը՝ պայմանավորված դրա թե տևողությամբ և թե առավելապես՝ բովանդակությամբ: Իբրև խնդրի լուծում՝ դեկանն առաջարկեց մեկ կիսամյակ տևողությամբ ուսումնաարտադրական պրակտիկայի անցկացումը՝ ընդգծելով, որ սա հնարավոր կլինի միայն, եթե ԵՊՀ-ն, իր հերթին, հստակեցնի համապատասխան կառույցների հետ աշխատանքը, այդ թվում՝ իրավակիրառ մարմնի համապատասխան կառույցում պրակտիկ աշխատող-դեկավարի վճարման առումով:

Դեկանը հատուկ անդարարձավ նաև Իրավաբանական կլինիկայի շրջանակներում իրականացված և իրականացվելիք ծրագրերին: Այսպես, հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրավաբանական կլինիկան տարբեր իրավական խնդիրներով անվճար իրավաբանական օգնություն է տրամադրել շուրջ 100 անձի: Բացի այդ, առաջին անգամ կլինիկայի ուսանողների ջանքերով մշակվել է դիմում ՄԻԵԴ, որը գրանցվել է դատարանի գրասենյակում: Համագործակցություն է հաստատվել «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հետ, որի շրջանակներում կլինիկայի ուսանողները այցելելու են տարբեր քրեակատարողական հիմնարկներ և խորհրդատվություն են տրամադրելու դատապարտյալներին (նման այց է կազմակերպվել Աբովյան ԲԿՀ): Սկիզբ է դրվել Ամերիկյան իրավաբանական ընկերակցության հետ համագործակցությանը Հայաստանում տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց իրավաբանական աջակցություն տրամադրելու բնագավառում: Դեկանը նաև նշեց, որ կլինիկայի զարգացումը նախատեսվում է առավել մասնագիտացված ուղղություններով, օրինակ, ներկայումս քննարկվում է փախստականների հարցերով իրավաբանական կլինիկա բացելու հնարավորությունը, որպիսի հարցում իր աջակցությունն է խոստանում ՄԱԿ-ի Փախստականների գծով հանձնակատարի գրասենյակը և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, ՄԱԿ-ի Երեխաների պաշտպանության գրասենյակի հետ քննարկվում է երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված կլինիկայի կայացման հնարավորությունը:

Անդրադարձ կատարելով պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրման խնդրին՝ պետ. Գ.Ղազինյանը նշեց, որ իրավագիտության ոլորտում և՛ գիտական, և՛ մանկավարժական ներուժով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը լավագույնն է Հանրապետությունում. ֆակուլտետի մասնագետներն են ընդգրկված եղել և ներկայումս էլ ակտիվորեն մասնակցում են սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումների գործընթացին: Բացի այդ, տեղի է ունենում նաև դասախոսական կադրերի արտահոսք դեպի պրակտիկ աշխատանքի ոլորտ. տեսական լուրջ գիտելիքներով զինված երիտասարդ դասախոսների ներգրավումը պետական (շատ դեպքերում բարձր) պաշտոնների և մասնավոր մասնագիտական գործունեության ոլորտ շատ առումներով ողջունելի է և հպարտանալու առիթ կարող է լինել, սակայն այն նաև թելադրում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրման անհրաժեշտություն: Դեկանը նշեց, որ ներկա պահին ֆակուլտետում դասավանդող դասախոսների թիվը 113 է, որից 43-ը՝ հիմնական, 50-ը՝ համատեղողներ և 20-ը՝ ասպիրանտներ: Նախկին տարիներին նման հարաբերակցություն պատկերացնելն անհնարին էր թվում: Ֆակուլտետն ունի 54 ասպիրանտ և 9 հայցորդ, որոնց մեծ մասը ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում:

Դեկանը նշեց, որ ֆակուլտետի ուշադրության կենտրոնում է նաև շրջանավարտների զբաղվածության հարցը: Հենց այդ նպատակով տարիներ առաջ ABA աջակցությամբ ֆակուլտետում հիմնվել է Կարիերայի կենտրոնը, որի հիմնական առաքելությունն է ֆակուլտետի ուսանողներին աշխատաշուկայի պահանջներին ծանոթացնելը, նրանց ու գործատուների միջև կապի հաստատումը և ամրապնդումը, ինչպես և վերջիններիս իրավական գիտելիքներին ու հմտություններին համապատասխան զբաղվածության խնդրի լուծումը: Հաշվետու ժամանակահատվածում այս կառույցի աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ արդեն իսկ կատարվել են որոշակի քայլեր.

բացվել է Կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջ, որը պարբերաբար թարմացվող տեղեկատվություն է պարունակում աշխատատեղերի վերաբերյալ, կազմակերպվել են հանդիպումներ հավանական գործատուների հետ (օրինակ, այց ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ), նախատեսվում է մասնակցել «Աշխատանքի տոնավաճառի» և այլն:

Դեկանը հավելեց, որ ֆակուլտետի շրջանավարտների զբաղվածության ապահովման հարցում շահագրգռվածություն են դրսևորել նաև առանձին կառույցներ, օրինակ ՀՀ դատախազությունը, ՀՀ Արդարադատության նախարարությունը: Մասնավորապես, ՀՀ Արդարադատության նախարարի հետ ձեռք բերված համաձայնության շրջանակներում արդեն իսկ կյանքի է կոչվում այն պայմանավորվածությունը, որը վերաբերում էր «Կրիմինալոգիա» միջճյուղային մասնագիտացմամբ կադրերի ներգրավմանը ՀՀ պրոբացիոն ծառայության կառույցում: Դեկանի գնահատմամբ՝ սա առավել ցայտուն օրինակներից է, երբ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետը պրակտիկայի համար նպատակային կադրեր է պատրաստում՝ գիտակցելով հոգեբանական, իրավաբանական, սոցիոլոգիական գիտելիքներու հմտություններ ունեցող կադրերի կարևորությունը դատապարտյալների հետ տարվող աշխատանքում: Կարիերայի կենտրոնի նոր տնօրենի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել կենտրոնի բուն գործառույթին զուգահեռ մշակել ծրագիր, որը ուղղված կլինի ֆակուլտետի բոլոր տարիների շրջանավարտների հետ կապեր հաստատելուն (առաջին հերթին արտերկրում աշխատող և ըստ ունեցած տեղեկությունների՝ մասնագիտական ոլորտներում բարձր կարգավիճակ զբաղեցնող) և նրանց վերաբերյալ տվյալների բազայի ստեղծմանը, ինչը հնարավորություն կտա հետագայում այդ պոտենցիալը ի շահ ֆակուլտետի և համալսարանի օգտագործելու:

Դեկանը հատուկ ընդգծեց, որ ֆակուլտետի համար առաջնային կարևորություն ունի գիտական գործունեությունը՝ հասկապես հաշվի առնելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող արմատական վերափոխումները և դրանց իրավական տեսանկյունից արձագանքելու անհրաժեշտությունը, իրավագիտության զարգացման ներկայիս մակարդակը: Դեկանը նշեց, որ թեև ֆակուլտետում շարունակվում են աշխատանքները մայրենի լեզվով ուսումնական և գիտական իրավաբանական գրականության ստեղծման ուղղությամբ, ֆակուլտետի դասախոսներն իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել բազմաթիվ գիտական և գիտագործնական սեմինարների և կոնֆերանսների, այդուհանդերձ այս առումով նույնպես ֆակուլտետն ունի խնդիրներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆակուլտետի դասախոսները մասնակցում են առավելապես այն գիտական միջոցառումներին, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվում են կազմակերպիչ կողմի հաշվին, մինչդեռ բավականին կարևոր գիտական միջոցառումներին ֆակուլտետի մասնագետները ցավոք սրտի ստիպված են լինում հրաժարվել մասնակցությունից բավարար ֆինանսավորման բացակայության պատճառով:

Ֆակուլտետի գիտահետազոտական գործունեության մեջ դեկանն առանձնացրեց նաև գիտական թեմատիկ հետազոտությունները: Դեկանի հաշվետվության համաձայն՝ ընդհանուր առմամբ հաշվետու տարում ԳՀԱ ամփոփ ցուցանիշները հետևյալ պատկերն ունեն.

1. դասագրքեր՝ 4 հատ (հրատարակում և վերահրատարակում),
2. ուսումնական ձեռնարկներ՝ 5 հատ,
3. ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ 5 հատ,

4. մենագրություններ՝ 11 հատ,
5. ատենախոսությունների պաշտպանություն՝
 - ա) թեկնածուական՝ 7 հատ,
 - բ) դոկտորական՝ 1 հատ,
6. գիտական հոդվածներ՝ 110 հատ,
7. գիտական զեկույց՝ 50 հատ:

Դեկանը հատուկ նշեց նաև դասախոսների տարաբնույթ գիտական միջոցառումներին ակտիվ մասնակցության (այդ թվում՝ միջազգային) (28 նմանատիպ միջոցառում) և արտասահմանյան հրատարակությունների աճի (7 հրատարակություն), ֆակուլտետի ասպիրանտների ու հայցորդների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի արդեն ավանդական դարձած տարեկան գիտաժողովների կազմակերպման և դրանց արդյունքներով գիտաժողովի նյութերի ժողովածուների հրատարակման մասին:

Դեկանի խոսքերով բավականին ակտիվացել է դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունը, և որ իրավագիտության ֆակուլտետի պատմության ընթացքում վերջինս նման տպավորիչ կազմ թե տարիքի և թե գիտական աստիճանների առումով չի ունեցել (իրավ. գիտ. դոկտորներ՝ 16 և իրավ. գիտ. թեկնածուներ՝ 70):

Դեկանն իր խոսքում նշեց, որ իրավագիտության ֆակուլտետի զարգացման կարևորագույն մարտահրավեր է նաև ֆակուլտետի միջազգայնացումը: Թեև ֆակուլտետը ունի հաստատված կապեր, համագործակցության հուշագրեր մի շարք արտասահմանյան համալսարանների Իրավագիտության ֆակուլտետների և գիտահետազոտական կենտրոնների հետ, սակայն այս համագործակցությունը դեռևս գոհացուցիչ համարվել չի կարող: Համագործակցությունը կարող է համարվել կայացած, եթե դրա արդյունքում կազմակերպվում են համատեղ կոնֆերանսները, գիտական սեմինարները, ուսանողների և դասախոսների փոխանակումներ, համատեղ հետազոտություններ ու հրապարակումներ, ինչը, սակայն, հաճախ հնարավոր չի լինում ապահովել նյութական ոչ բավարար ապահովվածության պարագայում: Դեկանի խոսքերով նման միջազգայնացման սկիզբ կարող է լինել ԵՊՀ 100-ամյակին նվիրված «Իրավագիտության արդի հիմնախնդիրները» պայմանական խորագրով միջազգային գիտաժողովը, որը ծրագրվում է անցկացնել 2018 թվականին:

Դեկանը հավելեց, որ ֆակուլտետում աշխատանքներ են տարվում ֆակուլտետում դասավանդող դասախոսների կողմից օտար լեզուներով դասընթացների ներմուծման ուղղությամբ, և որպես սկիզբ՝ ուսանողների համար ներդրվել է ֆակուլտետի բնույթի անգլերեն լեզվով դասախոսություն – քննարկումների շարք առավելապես արտասահմանյան բուհերում ուսանած դասախոսների ներգրավմամբ: Իբրև առանձին խնդիր՝ դեկանը նշեց նաև ուսանողների մասնակցության ապահովումը միջազգային դատախազ-մրցույթներին՝ ընդգծելով, որ այս տարի նման փորձ ֆակուլտետն ունեցել է, օրինակ, Նյուրնբերգյան դատավարության դատախազի շրջանակներում: Դեկանը նշեց նաև, որ չնայած իրավունքի գրեթե բոլոր ոլորտներում պարբերաբար նման դատախազեր են կազմակերպվում, սակայն ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը եզակի դեպքերում է հնարավոր լինում ապահովել: Մինչդեռ նման դատախազերին մասնակցելու հնարավորությունը լրացուցիչ մոտիվացնող գործոն կարող է հանդիսանալ ուսանողի կողմից առավել խոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում: Ուստի դեկանը կարևորեց հնարավորության սահմաններում այնպիսի հեղինակավոր միջազգային մրցույթներում ուսանողների մասնակցությունը,

ինչպիսիք են՝ Նյուրնբերգի, Ջեսսայի և Սրջագգային մասնավոր իրավունքի Վիեննայի և այլ նմանատիպ միջոցառումները:

Դեկանն իր խոսքում անդրադարձավ նաև Արցախի համալսարանի հետ ձեռքբերած նախնական պայմանավորվածության համաձայն՝ վերջինիս ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում աջակցելու ուղղությամբ ֆակուլտետի ծրագրերին:

Իր հաշվետվության վերջում դեկանն անդրադարձավ ուսանողական կառույցների կատարած աշխատանքներին՝ նշելով, որ ֆակուլտետի ուսանողական կառույցները համալսարանում զբաղեցնում են առաջնակարգ տեղեր, իսկ վերջին տարիներին ՈւԳԸ-ն բացարձակ հաղթող է: Դեկանն առանձնացրեց հանրային հնչեղություն ունեցող այնպիսի միջոցառումների իրականացումը ուսանողական կառույցների կողմից, ինչպիսիք են ապրիլյան իրադարձություններին նվիրված տեսահոլովակը, նույն թեմայով Եվրոպորիդի-մոդել նստաշրջանը (որոնք անցկացվեցին անգլերեն լեզվով):

Բացի այդ, դեկանը նշեց, որ ֆակուլտետի ղեկավարությունը շարունակում է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված բարձր առաջադիմությամբ ուսանողներին տարբեր եղանակներով խախուսելուն, մասնավորապես, որ ձեռք է բերվել համաձայնություն Վ.Հակոբյանցի անվան հիմնադրամի և Ֆրանսիայի Լ'անսիլետ հումանիտար, մշակութային և տնտեսական զարգացման սոցիալական ընկերակցության հետ բարձր առաջադիմությամբ և սոցիալապես անապահով ուսանողներին կրթաթոշակներ (ուսման վարձի վճարման ձևով) տրամադրելու վերաբերյալ: Այս համագործակցության ընթացքում կրթաթոշակ կստանան յուրաքանչյուր կիսամյակ 8-9 ուսանողներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռեկտոր Ա.Սիմոնյանը, դոց. Դ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Հարությունյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական:

2. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Ռ.Եոյանին պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Սահմանադրական իրավունքի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն քավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Ռ.Եղյանին շնորհել պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում:

3. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ա.Վարդապետյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Քրեական իրավունքի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ա.Վարդապետյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան